CONVERSE BANK

TRUSTED BY GENERATIONS

«31» 03 2026

№ 1.9-507

**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը**

Մենք պատասխանատու ենք բանկի ֆինանսական վիճակը(բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար: Այդ կապակցությամբ պատասխանատու ենք՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման,
- ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման,ներդրման և գործունեության ապահովման:
- ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման,
- Ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում միջոցներ ձեռնարկելու համար:

**Գլխավոր գործադիր տնօրեն,**
**Տնօրինության նախագահ՝** **Անդրանիկ Գրիգորյան**

**Գլխավոր հաշվապահ՝** **Դավիթ Ազատյան**

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1
+374 10 511 211

Converse Bank CJSC
26/1 V. Sargsyan, Yerevan, 0010, RA
+374 10 511 211
conversebank.am